

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, Մեկնութիւն Բերականի, աշխատասիրությամբ՝ Լ. Գ.
Խաչերյանի, Երևան, 1972, 177 էջ, դինը՝ 1 ռ. 25 կոպ.:

Վարդան Արեւելցու սույն աշխատության վերաբերյալ մի շարք բանասերներ տվել են որոշ տեղեկություններ՝ կատարելով համապատասխան վերլուծություններ¹։ Թրակացու հայ մեկնիչներին բնութագրելիս ն. Ադոնցը Վարդան Արեւելցուց մեջբերումներ է անում, համեմատում այլ մեկնիչների ասույթների հետ և դրանցով իսկ գնահատում հեղինակի գործը։ Լ. Խաչերյանը հրատարակելով Արեւելցու «Վասն բանին մասանց» աշխատությունը, միաժամանակ օգտագործում է «Մեկնութիւն քերականի» աշխատության որոշ հատվածներ։ Այս առիթով նա գրում է. «Աշխատության որոշ հատվածներ ավելի հասկանալի դարձնելու, ինչպես և ընթերցողին Վարդանի «Մեկնություն քերականին» աշխատության մասին որոշ գաղափար տալու նպատակով, մի քանի խնդիրների վերաբերյալ ցածում բերել ենք հատվածներ «Մեկնություն քերականին» աշխատությունից, վերցնելով այն մատենադարանի № 2371 ձեռագրից»։

Շուրջ մեկ տասնամյակ հետո Դ. Զահուկյանը, բնութագրելով Վարդան Արեւելցու ուսումնասիրությունները, մեջբերումներ է անում նաև նրա «Մեկնությունից», ապա «բանասիրական նկատառումներով» նշում հենց այդ աշխատության վերաբերող 16 ձեռագրեր²։

Գրախոսվող աշխատությունը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դնում Արեւելցու երկի քննական բնագիրը՝ պատրաստված 17 ձեռագրերի համադրական համեմատության հիման վրա։

1244—1246 թթ. Կիլիկիայի Հեթում Ա թագավորի խնդրանքով ստեղծվել է Վարդան Արեւելցու

«Մեկնութիւն քերականին», որպես քերականական ձեռնարկ։ Այն մի շարք ընդօրինակություններով բաղմացվել է և տարածվել Կիլիկիայի հայկական պետության և բուն Հայաստանի ուսումնական կենտրոններում։ Բանասիրական գիտ. դոկտոր Լ. Խաչերյանը բաղդատել է բաղմաթիվ գրիչների ընդօրինակումները և գիտական շրջանառության մեջ դրել միջնադարի քերականական մի կարևոր մեկնություն։

Երախոսվող աշխատանքը բաղկացած է առաջաբանից և բնագրից։ Երբի վերջում տրված են ուսերենն ու անգլերենն ամփոփումներ, ծանոթագրություններ, անձնանունների, տեղանունների և օգտագործված մատենագրության ցանկեր։

Բնագրային մասում ձեռագրերի համեմատությամբ ներկայացված են Դիոնիսիոս Թրակացու (170—90 թթ. մ. թ. ա.) 216 ասույթները («բանք») և Վարդան Արեւելցու համապատասխան մեկնությունները։

Դիոնիսիոս Թրակացու ասույթները, բնականաբար, բխում են հունարենի տվյալներից, իսկ հայ քերականի մեկնությունները գերազանցապես հավաստվում են զրաբարի և միջին հայերենի տվյալներով։ Մեկնվող ասույթներում, ինչպես և նրանց մեկնություններում, արծարծվում են հնչյունաբանական, բառագիտական, քերականական (ձևաբանական, շարահյուսական), կետադրական և տաղաչափական հարցեր։

Դրբի արժանիքն այն է, որ ձեռագրական բաղմաթիվ տարբերակների հիման վրա ամբողջական ձևով ներկայացվում են Թրակացու ասույթների վարդանյան մեկնությունները, ըստ որում Լ. Խաչերյանը վերլուծել և բնութագրել է Արեւելցու մեկնությունների ճշմարտացիությունն ու յուրահատկությունները, կատարել տեքստային շտկումներ և լեզվական փաստերի ուսումնասիրությամբ արել գիտական եզրակացություններ։

Աշխատության առաջաբան-ուսումնասիրությունը ընդգրկում է Վարդան Արեւելցու կյանքի ու գործի վերաբերյալ համառոտ տեղեկությունները և «Մեկնութիւն քերականի» աշխատության քննությունը, ըստ որում այստեղ ուշադրության է առնվում երկու հարց՝ լեզվաբանական-հնչյունաբանական-քերականագիտական հայացքնե-

¹ Տե՛ս Н. А до н, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915։ Լ. Խաչերյան, Վարդան Արեւելցու «Վասն բանին մասանց» աշխատությունը (Արմֆանի «Տեղեկագիր», Երևան, 1943, № 2, էջ 81—88)։ Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954 և ուրիշներ։

² Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 243—259, 382։

րի զարգացումը և բնագրագիտական հետազոտություններով նույնատիպ բերականական մեկնությունների հետ բնագրային աղբյուրների պարզումը։ Այստեղ նշվում են այն ձեռագիր աղբյուրները, որոնք «Մեկնության» հիմքն են և պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում և Բրիտանական թանգարանում։

«Մեկնութիւն բերականի»-ն, իբրև Թրակացու բերականության մեկնություն, ունեցել է իր նախորդները՝ Դավթի, Մովսես Քերթոզի, Ստեփանոս Սյունեցու, Համամ Արևելցու, Մաղիստրոսի բերականությունները։ Բնագրային մանրակերպիտ քննություն կատարելով՝ Լ. Խաչերյանը ցույց է տալիս, որ Վարդան Արևելցու աշխատանքը իր նախորդների հասարակ կրկնությունը չէ։ Բանաբաղելով նախընթաց հեղինակներին՝ Արևելցին դրսևորել է ինքնուրույն մոտեցում, ավելացրել իր կարծիքը լեզվական տվյալ երևույթը մեկնաբանելիս։ Լ. Խաչերյանը նշում է, որ նախընթաց բերականական մեկնություններից, իբրև առանձին ամբողջական բնագրեր, մեզ հասել են միայն Լևրուսը՝ V—VI դարերի խոշոր գիտնական Դավթի և XI դարի նշանավոր գիտնական Մաղիստրոսի գործերը։ Դրանք միմյանցից զանազանվում են նրանով, որ ժառաջինը սոսկ իր հեղինակի սեփական գրչին պատկանած երկասիրություն է, իսկ երկրորդը՝ աշխատություննե-րի համադրումն է բանաբաղային սկզբունքով մասամբ նաև սեփական հայացքների ու հարցադրումների ընդելուզմամբ»։

Այդ նշանակում է, որ Մաղիստրոսի աշխատության մեջ օդտադործված են և՛ Դավթի, և՛ մյուսների մեկնությունները։ Վարդան Արևելցին սակավ է դիմել Դավթին կամ Համամ Արևելցուն։ «Վ. Արևելցին,— գրում է Լ. Խաչերյանը,— իր մեկնության աղբյուրների համար շրջանառության մեջ է դրել ոչ թե համապատասխան հեղինակների աշխատություններն ուղղակիորեն, այլ ձեռքի տակ է ունեցել Բերականական այդ երկերն իր մեջ պարփակող Մաղիսաբոսի աշխատությունը. որից և օգտվել է նա» (ընդգծումները հեղինակինն են — է. Մ.)։ Հիշյալ հեղինակների մեկնությունները բազմաթիվ փաստերով զուգադրվում են և բնութագրվում իմաստային, ճանաչողական և լեզվական յուրահատկություններով։ Լեզվական նյութի համեմատական քննությամբ արձանագրվում է նաև, որ XVIII դարից Հակոբակ գրագրի անունով մնացած տեքստը, որը XIII—XIV դդ. մի գրագրի հիմքային օրինակն է ևղել, գերազանցապես կիլիկյան հայերենով է գրված, ունի բաղմաթիվ աղավաղումներ, չի կարող համարվել Վարդան Արևելցու գրչի արդյունքն ու ներ-

կայացվել գիտական հասարակայնությանը, իր-րև հարադատ բնագիր։ Որպես Արևելցու գրչին հարադատ բնագիր բնդունվում է «դարբարյան» խմբագրությունը։

Լ. Խաչերյանի հայացքից չի վրիպել նաև 17 ձեռագրերից մեկի մի հատվածի անհարիրու-թյունը. խոսքը վերաբերում է մակբայի բաժնում շաղկապին առնչվող հատվածի առկայությանը։ Լ. Խաչերյանի գրքում այդ անհարիրությունը վե-րացված է, և շաղկապին վերաբերող վիճելի հատվածի ընթերցումը տրված է այն տեղում, որտեղ դա պետք է լիներ հենց Արևելցու բուն գործում։

«Մեկնութիւն բերականի» դրքի վարդանյան մեկնությունները Լ. Խաչերյանի կողմից ուսում-նասիրվում են լեզվաբանական-հնչյունաբանա-կան-բերականագիտական հայացքների զար-գացումը» բաժնում։ Այստեղ առանձին-առանձին պարզաբանվում են Վարդան Արևելցու հայացք-ները լեզվաբանական որոշ ըմբռնումների, հըն-չյունաբանության, բառագիտության, ձևաբանու-թյան, շարահյուսագիտության և տաղաչափու-թյան մասին։ Լ. Խաչերյանը ընդգծում է, որ բե-րականության վերաբերյալ Թրակացու այն դը-րույթը, թե բերականությունը իր բնույթով «հըմ-տություն է», խորացվում է մեկնիչի կողմից։ Ա-րևելցու կարծիքով, բերականությունը, «հըմ-տություն» լինելով հանդերձ, նաև զիտուրյուն է։ Իսկ «հմտություն» ասելով պետք է հասկանալ երևույթների մեջ թափանցելու կարողություն, որ և «ստուգարանորեն» նույնն է թե՛ «հմտու-թյուն», այսինքն՝ «հունի» էության մեջ մտնելը, որ և համարժեք է «գիտություն» հասկացությանը։

Թրակացու մեկնիչը հանգում է այն ճիշտ եզ-րակացության, որ բերականությունը բացա-հայտում է լեզվի բերականական իմաստները, որի շնորհիվ ուսումնականը կարող է ըմբռնել լեզվի ներքին օրենքները, հղկվածությունը, գե-ղեցկությունը և տիրապետել դրանց։ Եթե Մովսես Քերթոզը բերականությունը դիտում էր որ-պես ժառանգելավարժություն», Ստեփանոս Սյու-նեցին և Մաղիստրոսը բերականությունը հա-մարժեք էին համարում «գրականությանը», «գրական արվեստին», ապա Արևելցին իր սահ-մանումով պաշտպանում ու զարգացնում է այն տեսակետը, որ բերականությունը ուրույն բնա-դավառ է, ուսմունք լեզվի միավորների ստույգ ձևերի մասին։

«Հնչյունաբանական դիտումներ» բաժնում մանրամասն քննության են առնվում Արևելցու մեկնությունները հայերենի հնչյունական հա-մակարդի վերաբերյալ։

Արևելցին հետաքրքրական դիտողություններ ունի հնչյունի և դրի վերաբերյալ։ Նրա կարծի-

քով հնչյունը իր բնույթով նման է բնության տարրերին, որոնք օժտված են ինչպես իրար հակադրվելու, այնպես էլ իրար զուգորդելու կամ ներդաշնակելու հատկությամբ: Գրերից ա, ե, ը, ո ձայնավորները չեն հանդիպում բառավերջում: Առաջին անգամ խոսվում է միևնույն հնչյունի գրավոր երկու դրսևորումների մասին՝ ո և ալ: Զայնավորների կարևորությունը լեզվի մեջ, բառակերտական նշանակության տեսակետից, համեմատվում է մարդու յոթ զգայարանների հետ, «որով յարգարի մարդութիւնս»: Հետաքրքրական են նաև մի քանի բաղաձայնների (գ, կ, ֆ, խ, ձ, ս, զ, ց) բացատրությունները՝ ըստ կազմավորման տեղի և արտաբերման եղանակի:

«Ձևաբանության և բառագիտության ըմբռնումների արժարժումներ» վերնագրի տակ հանգամանորեն բնութագրվում են Արևելցու մեկնությունները բառի և խոսքի մասերի վերաբերյալ: Միջնագրի մյուս քերականների նման վարդան Արևելցին ևս բառակազմական երևույթները քննում է խոսքի մասերի, ամենից առաջ՝ անվան քերականական և իմաստային հատկանիշները բացատրելիս: Այսպես, անվան «տեսակը» ըմբռնվում է բառակազմական տեխնիկայի առումով. այստեղից էլ «նախագաղափարը» (արմատական) և «ածանցական» (ածանցավոր) բառատեսակները: Արևելցին, պաշտպանելով Թրակացու տեսակետը, քերականության մեջ ընդունում է բառերի հետևյալ ձևաբանական խմբերը՝ անուն, բայ, հոգ, դերանուն, նախադրություն, մակբայ, շաղկապ: Հստակորեն մեկնաբանվում են Արևելցու ըմբռնումներն ու բացատրությունները վերոհիշյալ խոսքի մասերի և համադրյալ բառախմբերի (հոգ) ու ածանցների (նախադրություն) վերաբերյալ: Ուշագրավ են Արևելցու դատողությունները անվանը հատուկ մի շատ կարևոր քերականական կարգի՝ հոլովի մասին: Մեկնվում են ուղղական, սեռական, տրական, հայցական, առաքական (բացառական, գործիական), հոշական (կոշական) հոլովները և եզրակացվում, որ Արևելցին հոլովների տեսության հարցում ելնում է հոլովների իմաստներից: Պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում դերանվանը, հոգին, շաղկապին վերաբերող վարդանյան մեկնությունները: Արևելցին բայի բնութագրության հարցում թույլ է տալիս որոշ անճշտություններ, իսկ նախադրությունը մեկնելիս կրկնում է Դավթին և Մովսես Քերթոզին, «Շարահյուսագիտական հայացքներ» բաժինը համառոտակի ներկայացնում է վարդան Արևելցու շարահյուսական ըմբռնումների առաջընթացը՝ նախորդների համեմատությամբ: Կազմելով բարդ և պարզ նախադասության նմուշներ՝ Արևելցին տարբերում է միավորիչ (աշուկաման), տրոհական (առնջատական), պատճառի և հի-

մունքի («տարրադմատ»), հարցական, մակաբերական, ներհակական, ժամանակի, ղիջական («ընդդիմակք»), պայմանի, համեմատության («վարանականք») նախադասությունները:

Լ. Խաչերյանը Արևելցու դիրքը արժեքավոր է համարում նրանով, որ այն ժամանակին ծառայել է որպես ուսումնական ձեռնարկ և միջնադարի քերականական մտքի պատմության մեջ, Թրակացու այլ մեկնիչների համեմատությամբ, ուրույն տեղ է գրավում իր մեկնություններով ու մի շարք նոր հարցադրումներով:

Գրախոսվող գրքի առաջաբան-ուսումնասիրության մեջ, ցավոք, տեղ են գտել որոշ թերություններ, որոնց վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում մի երկու դիտողություն անել:

1. Ընդհանրապես լավ է, երբ բացատրվող մեկնվող խոսքին հաջորդում է բնագիր-մեջբերումը. դրանով հաստատվում է միտքը, հեշտությամբ ըմբռնվում հեղինակի ասածը, եթե այն առանձնապես դժվարամատչելի է, խրթին լեզվով է գրված: Իսկ եթե բնագիրը նման դժվարություններ չունի, կարծես, ավելորդ է դառնում, որ բացատրվող խոսքին մեջբերում հաջորդի: Այդպիսի մեջբերումներն առաջաբանում շատ են:

2. Առաջաբան-ուսումնասիրության մեջ քիչ չեն լեզվա-ոճական թերությունները, որոնք որոշ իմաստով նսեմացնում են ուսումնասիրության արժեքը: Նշենք մի քանիսը՝

ա) նախադասության անդամների անհամաձայնության դեպքեր՝ «...նշանակությունն ու արժեքը ընդգծվում է...» (6), «...նկատի է առնվում համապատասխան լեզուները...» (37), «...մեկնաբանումն ու հիմնավորումը... արդյունք է...» (40), «...կարևոր նշանակություն ունի այն հարցի լուսաբանումն ու գիտական որոշումը...» (61)։

բ) անհարթ, երկարաշունչ, երբեմն քերականորեն ճիշտ չկառուցված նախադասություններ և ոճական արտահայտություններ՝ «...դերանունը փոխարինում է որևէ խոսքի մաս...» (37), «Ի տարբերություն նախորդ քերական մեկնիչների... մինչդեռ վ. Արևելցին...» (27), «Ինչպես դիտել է...» (29), «նա դիտել է տալիս...» (24), «չմոռանանք նշելու...» (67), այդպես էլ՝ էջ 10, 24, 25, 34, 38, 50, 60 և այլուր:

գ) բառերի կամ արտահայտությունների ոչ միօրինակ գործածություններ՝ գործառություն (13) — գործառության (15), հատկանշի (19, 34) — հատկանիշի (15, 20, 25, 37), անց է կացնում (5) — անցկացնում է (14), բացի այդ (8, 30) — բացի դրանից (17, 51), դերանունի (37) — դերանվան (37), քերականների (աբերդողաց, 23) — բանաստեղծությունների (աբերդողաց, 8): Զի հասկացվում՝

երկու ձևերից հեղինակը որն է ճիշտ համարում: Դ) Քերականական սխալներ և սխալ ըմբռնումներ, անհաջող կամ թերի բացատրություններ, ուղղագրական, կետադրական սխալներ ու վրիպակներ՝ «պայմանի և ղիշական բնույթի բարդ ստորագրական նախադասություններ» (47), «են և դու երթանք առ թագաւորն» — «պարզ բնագրական նախադասություն է» (47), ըստ նրա (21), հարածիգություն (16), վերածի կենդանի խոսքի (10), ինքստիւնքյան

(50), արժեքազրկում է (52, 56), իվեր (44), նախադասություններ (փոխ. նախադրություններ) (39) և այլն:

Չնայած վերոհիշյալ մասնավոր թերություններին՝ գրախոսվող աշխատությունը ամբողջությամբ վերցրած կարևոր գործ է միջնադարի (և ոչ միայն միջնադարի) քերականագիտության ուսումնասիրության բնագավառում:

Է. ՄԿՐՏՁՅԱՆ

La version grecque ancienne du livre arménien d'Agathange, édition critique, par GUAY LAFONTAINE, Institut Orientaliste, Louvain-la-neuve, 1973.

Ագաթանգեղոսի հայերեն մատյանի հունարեն հին քաղմանությունը, Բնական բնագիր, աշխատասիրությամբ ԳԻ ԼԱՖՈՆՏԵՆԻ, Լուվեն, 1973:

«Ագաթանգեղոսի Հայոց պատմության» հայերեն բնագրի և նրան առնչվող բազում հարցերի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունի նրա հունարեն թարգմանության բնագիրը: Հունարեն Ագաթանգեղոսը առաջին անգամ լույս է բնծայվել 1762 թ. Անտվերպեռնում (Թելզիա) Հ. Ստիլտինգի ձեռքով, ըստ Ֆլորենցիայի Լավրենտյան մատենադարանի XIII դարի ձեռագրի¹: Հրատարակիչն իր տրամադրության տակ ունեցել է անժանոթ անձնավորության կողմից վերահիշյալ ձեռագրից կատարված մի ընդօրինակություն, որի հետևանքով այս հրատարակությունը թերի է ստացվել: Հետագայում Վ. Լանդլուան Ագաթանգեղոսի ֆրանսերեն թարգմանության հետ զուգահեռ տվել է նաև հունարեն թարգմանությունը ըստ Հ. Ստիլտինգի հրատարակության: Վերջապես 1888 թ.

Պ. դը Լագարդը², օգտագործելով հենց Լավրենտյան ձեռագիրը, տվեց մի նոր հրատարակություն, աչքի առջև ունենալով նաև հայերեն բնագիրը (ըստ Վենետիկի 1835 թ. հրատարակության):

Սակայն մամանակի ընթացքում պարզվեց, որ տարբեր ձեռագրերում կան հունարեն Ագաթանգեղոսի բնագրեր, որոնք թեև ամբողջական չեն (ինչպես Լավրենտյանը), այսուհանդերձ որոշ մասերով ավելի բնօրինակ և շատ ավելի հին, քան երկար մամանակ միակ ձեռագիրը համարվող Լավրենտյան օրինակը: Վերջինից այս ձեռագրերի ունեցած տարբերությունները ուսումնասիրել է Ժ. Գարիտը և այն մտցրել զիտական շրջանառության մեջ: Այսուհանդերձ քննական բնագրի պահանջը հայագիտության մեջ դնելով ավելի և ավելի էր զգացվում:

Վերջերս Լուվենում Գի Լաֆոնտենը հրատարակեց հունարեն մի նորահայտ³ համառոտ խմբագրություն՝ քաղված հունարեն Ագաթանգեղոսից: Ույն հրատարակությունը Գի Լաֆոնտենին հնարավորություն է տվել ավելի մոտիկից ծանոթանալու հունարեն Ագաթանգեղոսի բնագրին:

² „Agathangelus und die Akten Gregors von Armenien“ hrsg. von P. de Lagarde, Göttingen, 1888.

³ X—XI դդ. ընդօրինակված այս ձեռագիրը գտնվում է Սինայի Ս. Կատարինե վանքում, որ, ի դեպ, մինչև օրս արդեն հայտնաբերվել է Ագաթանգեղոսի արաբերեն երեք ձեռագիր: G. Lafontaine, Une Vie grecque abrégée de Saint Grégoire l'Illuminateur (Cod. Sin. Gr. 376), „Le Muséon“, 1973, № 1 | 2:

¹ Թելզիայում այժմ գործում է հայագետ քաղաքականության մի ամբողջ խումբ, որն զբաղվում է զլխավորապես Ագաթանգեղոսի հարցերով: Բոլորին հայտնի են քաղմամաստակ բանասեր պրոֆ. Ժ. Գարիտի աշխատությունները հայդասական մատենագրության այս կարևոր հարցի վերաբերյալ, մանավանդ նրա Documents pour l'étude du livre d'Agathange (Vatican, 1946) մենագրությունը, որ հրատարակված է Ագաթանգեղոսի մի նորահայտ բնագիր՝ հունարեն վարքը: Նրա աշակերտներից են ոչ միայն գրախոսվող գրքի հեղինակը, այլև Մ. վան Լեբբուքը, որը նույնպես հրատարակել է արաբերեն մի նորահայտ բնագիր՝ Քարշունի վարքը, որի ձեռագիրը գրված է եղել ասորապատարաբերեն (Revue des Études Arméniennes t. VIII, 1971).